Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	Անունը, ազգանունը	Իգնատի Առաքելյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) 2018 թվականի փետրվարի 12-15-ը
4.	Հրավիրող կողմը	Ավստրիայի Հանրապետության կայունության և զբոսաշրջության նախարարություն
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Գյուղատնտեսության բնագավառում երկկողմ համագործակցության զարգացմանն առնչվող հարցերի քննարկում Անասնապահական ֆերմերային տնտեսությունների՝ այդ թվում նաև փոքր անասնապահական ֆերմերային տնտեսությունների մոդելը, կերարտադրության հետ կապված խնդիրները, կոոպերատիվների զարգացման մոդելները, կաթի հավաքման համակարգը, բարձր-արժեք մշակաբույսերի արտադրության ավստրիական փորձի, շարժական փոքր գործարանների կիրառությունը գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և սպառման մեջ, ինչպես նաև անասնապահական կոոպերատիվների,
6.	Քննարկված թեմաները	• Ավստրիական և հայկական կողմերի համագործակցության ուղիները գյուղատնտեսության բնագավառում • Փոքր անասնապահական տնտեսությունների մոդելը • Կերարտադրության խնդիրները • Կաթի հավաքման համակարգը • Պետության և արհմիությունների դերը անասնապահության, կաթի և մսի արժեշղթայի կարգավորման մեջ • Գյուղատնտեսական կենդանիների հաշվառում • Ինտենսիվ այգեգործություն • Տնկարանների ուսումնասիրություն • Ինտենսիվ այգիների համար անհրաժեշտ տնկիների արտա-դրություն • Խաղողի ֆիլոկսերադիմացկուն տնկիներ • Այգիների քարտեզագրում, հողերի, ֆերմերային տնտեսությունների, գյուղատնտեսական կենդանիների ռեգիստր • Շարժական փոքր գործարաններ • Շարժական փոքր գործարանների կիրառությունը գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և սպառման մեջ, դրանց արդյունավետությունը • Գյուղատնտեսական ծրագրերի սուբսիդավորման համակարգը

		• Գյուղատնտեսության ապահովագրության համակարգ
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Փետրվարի 12 Հանդիպում Voran Machinery ընկերության ներկայացուցչի հետ: Քննարկված հարցեր՝ Ընկերության կողմից արտադրվող շարժական փոքր գործարանների կիրառությունը գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և սպառման մեջ, դրանց արդյունավետությունը: Ընկերության տեսլականը Հայաստանում դրանց կիրառության վերաբերյալ Հանդիպում Ավստրիայի կայուն զարգացման նախարարության գլխավոր քարտուղար Յոզեֆ Պլանկի հետ Քննարկված հարցեր՝ Հայաստանի գյուղատնտեսական ծրագրերին ավստրիական կառավարության աջակցությունը: 2015թ. ՀՀ և ԱՀ նախարարությունների միջև ստորագրած համագործակցության մասին հուշագրի կատարման ընթացքը, համագործակցության հետագա ուղղությունները Այց անասնապահական ֆերմա Քննարկված հարցեր՝ Փոքր անասնապահական տնտեսությունների մոդելը, կերարտադրության խնդիրները, կաթի հավաքման համակարգը, կաթի գների որոշման սկզբունքները, պետության և արհմիությունների դերը անասնապահության, կաթի և մսի արժեշղթայի կարգավորման մեջ, անասնապահական կոոպերատիվների մոդելը Հանդիպում Kreuzmayr ընկերության ներկայացուցչի հետ Քննարկված հարցեր՝ Ընկերության կողմից արտադրվող Շարժական փոքր գործարանների կիրառությունը գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման և սպառման մեջ, դրանց արդյունավետությունը: Ընկերության տեսլականը Հայաստանում դրանց կիրառության վերաբերյալ Փետրվարի 13 Հանդիպում Ավստրիայի Ագրար-Մարկտ ՊՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Գյունտեր Գրիզմայերի հետ Քննարկած հարցեր՝ Գյուղատնտեսական միավորումների միասնական ռեգիստրի ստեղծման, տարածքների քարտեզավորման, գյուղատնտեսական կենդանիների հաշվառման մեխանիզմների ներդրման հարցերում ավստրիական փորձի ուսումնասիրման հնարավորությունները Հանդիպում Ավստրիայի գյուղատնտեսական պալատի նախագահ Հերման Շուլթեսի հետ Քննարկված հարցեր՝ Ավստրիայի տարածքում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարողների ինքնակազմակերպման համակարգը, գործող տարածք-

		ային պալատների և կոոպերատիվների գործունեության և պետական կառույցների հետ առնչվելու հետ կապված խնդիրները, գյուղատնտեսական խորհրդատվական համակարգը Հանդիպում Ավստրիայի Ագրար-Մարկտ մարկետինգային կազմակերպության գլխավոր տնօրեն Միխայել Բլասի հետ: Քննարկված հարցեր՝ Գյուղատնտեսական արտադրանքի պիտակավորում, գյուղատնտեսության բնագավառում զբաղվողների տեղեկացվածության բարձրացման համակարգը, գյուղատնտեսական ապրանքների բրենդավորում Փետրվարի 14 Հանդիպում Մրգի և գինու արտադրության դպրոցի գլխավոր տնօրեն Ռեինհարդ Էդերի հետ Քննարկված հարցեր՝ Գյուղատնտեսության ոլորտում կրթական համալիրների ստեղծման ավստրիական փորձը, համագործակցության ուղիները հայկական կողմի հետ, մրգերի վերամշակման ավստրիական փորձը Հանդիպում Ավստրիայի զարգացման գործակալության տնօրեն Մարտին Լեդոլթերի Քննարկված հարցեր՝ Ավստրիայի կառավարության կողմից գործակալության միջոցով Հայաստանի գյուղատնտեսության մրցունակությունը բարձրացնող ավարտի հասցրած և դեռ ընթացքում գտնվող նախագծերի արդյունավետությունը: Նոր ծրագրերի իրականացումը՝ ընդգրկելով նաև Ավստրիայի գյուղատնտեսական ոլորտում գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կառույցների փորձի ուսումնասիրության, ինչպես նաև մասնագետների պատրաստման և գյուղատնտեսական կրթության հեռանկարները: Փետրվարի 15 Հանդիպում Վիլլի Օպից գինեգործական ընկերության տնօրենի հետ Քննարկված հարցեր՝ Խաղողագործության և գինեգործության ավստրիական փորձը Հանդիպում խաղողի տնկիներ արտադրող ընկերության ներկայացուցիչների հետ Քննարկված հարցեր՝ Ինտենսիվ այգեգործություն, ինտենսիվ այգիների համար անհրաժեշտ տնկիների արտադրություն, խաղողի ֆիլոկսերադիմացկուն տնկիների արտադրություն Ավստրիայում գտնվելու ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարի գլխավորությամբ պատվիրակությունը այցելեց նաև Ներքին Ավստրիայի և Բուրգենլանդի ֆերմերային տնտեսություն-

		ներ, գյուղատնտեսական բնագավառում մասնագետներ պատրաստող և վերապատրաստող ակադեմիաներ, գինեգործական և մրգագործական գործարաններ, ագարակներ և տնկարաններ, հանդիպումներ ունեցավ մի շարք գյուղատնտեսական սարքավորումների և գյուղատնտեսական լոգիստիկ ընկերությունների ղեկավարների հետ, ինչպես նաև այցելեց գյուղատնտեսության ոլորտում մասնագիտացված ապահովագրական ընկերություն:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	Ավստրիայի կայուն զարգացման նախարարության գլխավոր քարտուղար Յոզեֆ Պլանկի հետ համաձայնություն է ձեռք բերվել մշակել գյուղատնտեսության ոլորտում հայ-ավստրիական համագործակցության հետագա ուղղությունները Հանդիպում Kreuzmayr և Voran Machinery ընկերությունների ներկայացուցչի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել ներկայացնել ընկերությունների արտադրանքի կիրառումը Հայաստանում Ավստրիայի Ագրար-Մարկտ ՊՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Գյունտեր Գրիզմայերի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն օժանդակել ներդնել գյուղատնտեսական միավորումների միասնական ռեգիստրի ստեղծման, տարածքների քարտեզավորման, կենդանիների հաշվառման միասնական համակարգ: Ավստրիայի Ագրար-Մարկտ մարկետինգային կազմակերպության գլխավոր տնօրեն Միխայել Բլասի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն օժանդակել բրենդավորող կազմակերպությունների ընտրության և գյուղատնտեսական ապրանքների բրենդավորման հարցում: Մրգի և գինու արտադրության դպրոցի գլխավոր տնօրեն Ռեինհարդ Էդերի հետ ձեռք է բերվել համաձայնություն կազմակերպել մասնագետների և ուսանողների վերապատրաստում: Ավստրիայի զարգացման գործակալության տնօրեն Մարտին Լեդոլթերի հետ ձեռք է բերվել համաձայնություն՝ ընթացիկ ծրագրերի ըստ անհրաժեշտության փոփոխություններ կատարելու, գյուղատնտեսական կենդանիների հաշվառման, օրգանիկ գյուղատնտեսության ծրագրերի իրականացման շուրջ:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Առաջարկվում է ստեղծել աշխատանքային խումբ՝ այցի ընթացքում ձեռք բերված փորձը ուսումնասիրելու և համաձայնությունները իրականացնելու նպատակով:
10.	Գործուղվողները՝	ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյան

		ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական Արամ Ղարիբյան ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Գագիկ Մարտիրոսյան ՀՀ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Գեղամ Գևորգյան